ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր Կորյուն Աթոյանի ելույթը ՀՊՏՀ 26-րդ գիտաժողովի լիագումար նիստում

Հարգելի հյուրեր, ներկաներ, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 26-րդ գիտաժողովի հարգելի մասնակիցներ

Մեր համալսարանը, լինելով Հայաստանի Հանրապետությունում տնտեսագիտական կրթական ծրագրերի մատուցման բնագավառում առաջատար համալսարաններից մեկը, չի կարող ուշադրության կենտրոնում չպահել Հայաստանի տնտեսության զարգացման, մասնավորապես՝ կայուն տնտեսական աճի խթանման, տնտեսության մրցունակության բարձրացման, գործարար միջավայրի բարելավման և միջազգային տնտեսական համագործակցության ընդլայնման արդի հիմնախնդիրները: Ավելին, ես կարծում եմ, որ մենք մեր գիտական-հետազոտական գործունեության առանցքում մշտապես պետք է դնենք Հայաստանի տնտեսական զարգացման, կայուն տնտեսական աճի խթանման, տնտեսության մրցունակության բարձրացման և պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման համակարգերի լավարկման ուղղությամբ մեր նպաստը բերելու տեսլականը՝ հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ մեր երկրում հետզհետե ավելանում է գիտականորեն փաստարկված լուծումների պահանջարկը:

Պատահական չեմ համարում, որ նոր ձևավորված Կառավարությունը կարճաժամկետ միջոցառումների ու երկարաժամկետ ռազմավարական բարեփոխումների ծրագրեր մշակելու նպատակով կարևորել է սեղմ ժամկետներում պետական կառավարման համակարգի և տնտեսության վիճակի խոր ախտորոշում իրականացնելու և ստացված արդյունքների վրա լուծումներ մշակելու անհրաժեշտությունը: Մյուս կողմից,

կառավարության ծրագիրն ուղերձներ է պարունակում նաև Հայաստանի ու Սփյուռքի մասնագիտական ու փորձագիտական շրջանակների համար՝ հայտարարելով մեր երկրի առջև ծառացած խնդիրների լուծման նպատակով ՀՀ Կառավարությանն առընթեր Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոնի ձևավորման և դրանում փորձագիտական ներուժի համախմբման մասին:

Ցանկանում եմ նշել, որ հետազոտությունների բնագավառում համալսարանի գիտական ներուժի համախմբման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Կառավարությանը գիտականորեն փաստարկված լուծումներ առաջարկելու նպատակով Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում ձևավորվել է «Ամբերդ» հետազոտական կենտրոնը, որն իր նախաձեռնությամբ և ՀՀ տարբեր գերատեսչությունների հետ քննարկումների հիման վրա իրականացրել է հանրապետության տնտեսության ամենահրատապ հիմնախնդիրներին առնչվող շուրջ երկու տասնյակ հետազոտական ծրագրեր: Բացի այդ, համալսարանում հետազոտական աշխատանքներ են իրականացնում մի շարք գիտաուսումնական խմբեր, որոնց հետազոտությունները ևս նպատակաուղղված են եղել ՀՀ տնտեսության իրավիճակի ախտորոշմանը: Իմ համոզմամբ, Տնտեսագիտական համալսարանի համար սա տնտեսական խնդիրների լուծումներ առաջադրելու լավագույն ճանապարհն է:

Հարգելի ներկաներ

ՀՊՏՀ 26-րդ գիտաժողովը նվիրված է գործարար միջավայրի բարելավման և միջազգային տնտեսական համագործակցության ընդլայնման արդի հիմնախնդիրներին: Կարևորելով գործարարության և ձեռնարկատիրության դերը երկրի տնտեսության զարգացման գործում՝ ՀՀ Կառավարությունը փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը համարելով Հայաստանի տնտեսության զարգացման գերակա ուղղու-թյուններից մեկը՝ շարունակական քայլեր է ձեռնարկում ոլորտի պետական աջակցության և զարգացման ուղղությամբ: Արտահանման խրախուսման գործում փոքր և միջին ձեռնարկատիրության դերի ուսումնասիրությունը շատ արդիական է այսօր՝ ելնելով այն փաստից,

որ փոքր և միջին բիզնեսի զարգացումը ընկած է մեր երկրի հետագա տնտեսական զարգացման հիմքում:

Այդուհանդերձ, Հայաստանի Հանրապետությունում գործարարության և ձեռնարկատիրության ծավալման համակարգը ամբողջապես կայացած համարել չի կարելի և շատ հիմնախնդիրներ հրատապ լուծման, իսկ տնտեսական բազմաթիվ խթանները՝ կատարելագործման կարիք ունեն:

Հարգելի գործընկերներ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 26-րդ գիտաժողովը նույնպես հիմնականում թիրախավորել է տնտեսական զարգացման վերոհիշյալ խնդիրները և մենք հուսով ենք, որ գիտաժողովի 4 բաժանմունքներում բուհի հետազոտողների զեկուցումների հիման վրա հնարավոր կլինի ձևակերպելու մեր տեսակետը ՀՀ գործարար միջավայրի բարելավման, երկրի արտաքին տնտեսական գործունեության, միջազգային տնտեսական համագործակցության և պետական կառավարման համակարգի լավարկման առաջնահերթությունների վերաբերյալ:

Հաջող և արդյունավետ ընթացք եմ մաղթում Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 26-րդ գիտաժողովին:

Շնորհակալություն:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ

ՀՊՏՀ ռեկտոր, դոկտոր, պրոֆեսոր